

«Վարդանանք կրթահամալիր» ՍՊԸ  
Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների  
վերապատրաստման դասընթաց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ  
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Թեմա*՝ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԹԵՍԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

*Առարկա*՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Ուսուցիչ*՝ Ազնիվ Սանասարի Ոսկանյան

*Վերապատրաստող*՝ Արմեն Ամիրխանյան

Վանաձոր 2022

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթությունում անընդհատ ընթացող բարեփոխումների նպատակն է որակի բարելավումն ու ժամանակակից պահանջներին համապատասխան գործունեության ապահովումը:

Այդ խնդիրների ժամանակակից մոտեցումներում առանցքային դեր է վերագրվում հանրակրթությունում աշակերտի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների գնահատման և արժևորման համակարգերին: Ուսումնական ողջ գործընթացն ուղեկցվում է գնահատման համակարգի կիրառմամբ:

Կրթության որակն ասելով հասկանում ենք պետական չափորոշիչով և ծրագրերով ներկայացվող պահանջներին սովորողի համապատասխան աստիճանը:

Հիմնականում կրթության որակով է պայմանավորված պետության, անհատի, հետևաբար հասարակության վիճակն ու Լբարեկեցությունը:

Վերջինտասնամյակներում բազմաթիվ երկրներում կրթության որակի բարելավումը կապվում է գնահատումների նոր համակարգի հանրակրթությանը ներկայացվող բովանդակային պահանջներին դրանց ճիշտ տեղաբաշխման հետ:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների չափորոշիչների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելիս գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղորդումը և խորհրդատվությունը, կրթական հնարավորությունների բացահայտումը սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը: Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների բարելավման և կատարելագործման նպատակով օգտագործվում են միավորային (նիշային) և ուսուցանող (ոչ նիշային) գնահատման արդյունքները:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը:

Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքների կատարման մակարդակը, լաբորատոր և գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները: Գնահատումը, արժևորումը և չափումը եզրույթներ են, որոնք առնչվում են որոշակի տվյալների պարբերական հավաքման և որոշումներ կայացնելու նպատակով դրանց վերլուծության հետ: Արժևորումն աշխատանքի արդյունքի, երևույթի, արժեքավորության կամ արժեքի մասին հիմնավորված եզրահանգում անելն է: Ուսուցիչներն արժևորում են, թե աշակերտներն ինչպիսի հաջողությամբ կամ ինչ չափով են հասնում իրենց նպատակներին: Ուսուցիչներն աշակերտներին արժևորում են նաև օլիմպիադաներին կամ այլ ստուգատեսների ու մրցույթների նրանց պատրաստականության իմաստով, ինչպես նաև տարեվերջին որոշելով՝ արդյո՞ք նրանք բավարար չափով պատրաստ են հաջորդ ուսումնական տարում կրթությունը բարեհաջող շարունակելու համար, թե՞ ամռանը լրացուցիչ աշխատելու անհրաժեշտություն կա: Գնահատումը ուսումնական գործընթացում նշանակում է նաև քանակական և որակական տվյալների նպատակային հավաքում:

Ուսուցիչների համար գնահատման նպատակը սովորաբար աշակերտների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է:

Ուսուցման արդյունքը գնահատվում է.

Համեմատության միջոցով՝ բաղդատելով նույն կրթատարածքի այլ երկրների արդյունքների հետ, որից հետո անհրաժեշտության դեպքում պետք է վերանայել կրթական չափորոշիչները: Բացարձակ պահանջներին՝ չափորոշիչներին համապատասխանության աստիճանով:

### **Ընթացիկ գնահատման համակարգ**

Ընթացիկ գնահատման համակարգ ասելով հասկանում ենք ուսումնառության ընթացքում ուսուցչի կողմից աշակերտների ձեռքբերումների մասին կանոնակարգված քանակական և որակական տվյալների հավաքագրում, գրանցում, ամփոփում, հետադարձ կապ, վերլուծության հաշվետվություն և գնահատման աշխատանքների կառավարում:

Ուսումնական գործընթացում աշակերտների գնահատումն ու արժևորումը հիմնականում ամփոփում են այն, թե դասավանդման ընթացքում գնահատման և արժևորման միջոցով ուսուցիչն ինչ խնդիրներ է տեսնում, դրանց լուծման համար ինչ ուղիներ է առաջադրում և ինչ որոշումներ է կայացնում: Այդ խնդիրներից են.

Արդյո՞ք դասը ցանկալի հունով է ընթանում, ի՞նչ պետք է անել դասն ավելի արդյունավետ դարձնելու համար: Արդյո՞ք սովորողներն ըմբռնում ու յուրացնում են դասավանդվող ուսումնական նյութը: Ինչքանո՞վ է յուրաքանչյուր աշակերտ յուրացնում նոր նյութը: Ե՞րբ կատարել հարցումներ և տալ թեմատիկ գրավոր աշխատանքներ: Սովորողները պատրա՞ստ են, արդյոք, անցնելու ծրագրով նախատեսված հաջորդ ուսումնական նյութը:

### **Գնահատման մեթոդները աշխարհագրության դասավանդման ժամանակ**

Գոյություն ունեն գնահատման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են գնահատումը պատասխանների ընտրանիի միջոցով, շարադրանքի գնահատումը, դրսևորման և արդյունքի գնահատումը, անձնական հաղորդակցումը՝ որպես գնահատում, հուզական գնահատում և այլն:

Գնահատումը պատասխանների ընտրանիի միջոցով–Բարեփոխումների ընթացքում լայնորեն կիրառվում են պատասխանների ընտրանի առաջարկող այնպիսի

առաջադրանքներ, ինչպիսիք են՝ մի քանի պատասխանից. «Ճիշտ է\սխալ է» պատասխան պահանջող, համապատասխանեցման և բաց թողնված պատասխանը լրացնել պահանջող առաջադրանքները:

Շարադրանքի գնահատում – Այս մեթոդը լայնորեն կիրառվում է ոչ միայն լեզուների, այլ նաև աշխարհագրության դասավանդման ժամանակ: Մեթոդն օգնում է հասկանալ, թե սովորողներն ինչպես են մտածում, զգում, դատում, իմացածը կապում չիմացածին:

Դրսևորման և արդյունքի գնահատումը - Դրսևորման կամ կատարման և արդյունքի գնահատումը սովորողներին ներգրավում է որոշակի հմտությունների դրսևորում՝ պահանջող կամ որոշակի չափորոշիչների համապատասխան արդյունքի ստեղծման գործողություններում: Դրսևորման մեթոդները գործածվում են սովորողների և ուրիշ մարդկանց հետ փոխգործողության, սարքերով ու սարքավորումներով աշխատելու կամ տարբեր իրավիճակներում գործելու հմտությունները գնահատելու համար: Արդյունքում առաջադրանքը չափորոշիչների վրա հիմնված առաջադրանք է, որն աշակերտից պահանջում է բան ստեղծել: Այդպիսի առաջադրանքի արդյունքը կարող է լինել գիտական հոդվածը, նկարը, քարտեզը, տեղանքի համայնապատկերը, նախագիծը և այլն:

Անձնական հաղորդակցությունը որպես գնահատումը - Սովորողի հետ զրուցելիս ուսուցիչը արժեքավոր տեղեկություններ է հավաքում նրանց առաջադիմության մասին: Մենք հազվադեպ ենք անձնական համագործակցությունը գնահատում համարում, սակայն շատ հաճախ դա հենց գնահատում է (Stiggins 2005): Մթիզողնալը նշում է, որ գնահատումը երբևիցե ավելի մեծ վարպետություն չի պահանջում, քան այն ժամանակ, երբ անձնային փոխհարաբերությունները կիրառվում են սովորողի աճին և զարգացման հետևելու նպատակով: Անձնական հաղորդակցման գնահատման համատեքստում ապահովությունն առկա է, երբ սովորողները հասնում են հաջողության կամ ձախողվում են աննկատ, առանց նրանց ճնշող, անհարմար վիճակի մեջ դնող հասարակական համընդհանուր ուշադրության:

Հուզական գնահատումը – Մանավարժների մեծ մասը կարևորում է հույզերը և դրանց տատանումները: Անկասկած է, որ սովորողների հուզական վիճակը պետք է

հետաքրքրի բոլոր ուսուցիչներին: Սակայն ոչ բոլորն են փորձում գնահատել սովորողների հուզական վիճակը:

### **Միավորային և ուսուցանող գնահատումը**

Ընթացիկ գնահատումները տրոհվում են երկու գլխավոր ձևերի՝ միավորային և ուսուցանող:

Միավորային գնահատումն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր: Դրա նպատակն է թվանշանների միջոցով գնահատել, գնահատական տալ կամ չափել ուսումնական գործընթացում աշակերտի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշիչով ու ծրագրով: Մեր երկրում կիրառության մեջ է եղել հիմնականում գնահատման այդ ձևը, որի իրագործման կարգով պայմանավորված՝ գնահատականի հավաստիության աստիճանը ցածր է: Այդ դեպքում մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը: Գնահատման նոր համակարգում միավորի հավաստիության աստիճանն անհամեմատ բարձր է: Գնահատման երկրորդ ձևը նախատեսում է գնահատումների կամ արժևորումների օգտագործում՝ զուտ սովորելու և սովորեցնելու նպատակով: Այն անվանում են ուսուցանող գնահատում կամ գնահատում՝ սովորելու համար: Գնահատման այս բաղադրիչի նպատակն, ըստ էության, միտված են կրթության որակի բարելավմանը, հատկապես թույլ և միջին ունակություններ ցուցաբերող աշակերտների համար:

Միավորային գնահատումն ունի կրթության որակը վերահսկող դեր: Այն նախատեսվում է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա անցնելուց հետո՝ կիսամյակի ընթացքում գիտելիքի, կարողությունների և հմտությունների յուրացման մակարդակն ամրագրելու, գործնական աշխատանքների կատարման կամ ուսումնական այլ հմտությունների որակը թվանշանով արտահայտելու համար: Թվանշանային գնահատականի օգնությամբ արձանագրվում է տվյալ նյութին աշակերտի տիրապետման աստիճանը: Միավորային գնահատումն ունի «մրցակցային» բնույթ: Ստացած միավորների միջոցով աշակերտները համեմատվում են մեկը մյուսի հետ: Այս գնահատման արդյունքները օգտագործվում են կրթության որակի հաշվետվության և սովորողի կրթական ձեռքբերումների ներկայացման նպատակով:

Ընթացիկ գնահատման նոր համակարգում շեշտադրվում են աշակերտի հետ կատարվելիք կանոնակարգված ուսուցողական աշխատանքները, որոնց անվանում ենք ուսուցանող գնահատումներ կամ արժևորումներ: Այդ աշխատանքներն ունեն գուտ ուսուցանող բնույթ և կիրառվում են միավորային գնահատումների միջև ընկած ժամանակահատվածում: Այստեղ աշակերտի ձեռքբերումները համեմատվում են կրթական պահանջների և նրա նախկին ձեռքբերումների հետ միայն և չեն համեմատվում մյուս աշակերտների ձեռքբերումների հետ:

Ուսուցանող գնահատման մեկ փուլը կարելի է ներկայացնել այսպիսի անցումով. դասավանդում – ուսումնառություն - ուսուցանող գնահատում – հետադարձ կապ – բարելաված ուսուցանում: Ընթացիկ գնահատումը ներառում է ուսումնական գործընթացի գնահատումները՝ բացառությամբ կիսամյակային ամփոփիչ աշխատանքների ու քննությունների:

Ընթացիկ գնահատումների կիրառման մեկ լրիվ փուլը նախատեսված է մեկ կիսամյակի համար:

Ընթացիկ գնահատման նոր համակարգը պարունակում է ևս մեկ նորույթ, այն է՝ պաշտոնական գրանցումների համար գնահատման 10 միավորային սանդղակի գործածումը: Սկսած 2010 թվականից՝ այն կիրառվում է նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում: Այդ սանդղակով անցողիկ են համարվում 4 և ավելի միավորները: 10 միավորային սանդղակով գնահատման դեպքում գործածության մեջ են մտնում նաև 1-ից մինչև 3 միավորները, քանի որ գնահատումների նոր համակարգում յուրաքանչյուր թվանշան ազդեցություն ունի կիսամյակային գնահատականի ձևավորման վրա: Ընթացիկ ամեն մի ստուգման դեպքում, կախված առաջադրանքների տեսակից ու քանակից, ուսուցիչը կարող է օգտագործել նաև գնահատման այլ սանդղակներ: Այդպիսի մոտեցում որոշ դպրոցներում արդեն իսկ կիրառվում են: Պաշտոնական գրանցումների համար այլ սանդղակով դրված գնահատականները պետք է բերվեն 10 միավորային սանդղակի:

## ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Միավորային գնահատումն ունի մրցակցային բնույթ, և դրանով իսկ նրա դերը դառնում է չափազանց կարևոր: Աշակերտին միավորով գնահատելը պիտի լինի ճիշտ և արդարացի: Քանի որ ուսուցիչը հիմնականում առաջնորդվում է համեմատության սկզբունքով, հետևաբար, այս դեպքում առավել կարևոր է դառնում արդարացիությունը: Դրված միավորի անարդարացիությունը կարող է հանգեցնել բազմաթիվ հետևանքների: Այն աշակերտի մեջ նվազեցնում է կամ իսպառ վերացնում է սովորելու ձգտումը, դպրոցը դարձնում է անցանկալի վայր, որպես ձևավորվող քաղաքացի՝ նա կորցնում է հավատն ուսուցչի ու հասարակական արդարության նկատմամբ:

10 միավորային սանդղակի ներդրումը նպաստել են ուսումնական գործընթացի բարելավմանը, սովորող-ուսուցիչ-ծնող-դպրոց համագործակցության ապահովմանը: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի վերահսկումը:

Ընթացիկ գնահատման շնորհիվ բացահայտվում են սովորողների, ուսուցիչների և դպրոցների կողմից պետական առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ընթացքը և արդյունքները, ուսուցման և ուսումնառության գործընթացում ուսուցիչների և սովորողների ձեռքբերումներն ու դժվարությունները:

## ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,

### ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ընթացիկ գնահատման հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները: Ընթացիկ գնահատման համակարգի համար ամրագրվում են հետևյալ կարևոր գործառույթները.



Ճշգրտել յուրաքանչյուր սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը, խթանել նրա ուսումնական ակտիվությունը, Հայտորոշել ուսուցման ընթացքն ու արդյունքները,  
Շաղկապել ուսուցումն ուսումնառության հետ, փոխադարձ կապ ապահովել սովորողի, նրա ծնողի հետ, հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը՝ մեկնարկային վիճակի նկատմամբ, վերահսկել ուսուցման գործընթացն ու արդյունքները:

### **Ընթացիկ գնահատման ձևերն ու ստուգման տեսակները**

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝

1. Ուսուցանող գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով և մեկնաբանություններով,

2. Միավորային գնահատում, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջ թեմայի կամ թեմաների յուրացման աստիճանն ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով:

Գնահատման այս երկու ձևերի նպատակային և գործառության ին քազմազանությունն ապահովելու նպատակով գործածության են երաշխավորվել ստուգման ու հայտորոշման հետևյալ ձևերն ու տեսակները՝

բանավոր հարցում,

*թեմատիկ գրավոր աշխատանք,*

*ինքնուրույն աշխատանք տանը կամ դպրոցում,*

*գործնական աշխատանք,*

*խմբային աշխատանք,*

*համագործակցային աշխատանք,*

*քննարկում,*

*բանավեճ,*

*նախազժային աշխատանք:*

Առաջադրանքների կիրառումն իրականացվում է երեք եղանակով՝ բանավոր, գրավոր և գործնական: Ստուգման միջոցները պետք է լինեն հավաստի և հուսալի: Ընթացիկ գնահատման ձևերի ու տեսակների ամբողջական կիրառման համար որպես ժամանակային-հաշվարկային միավոր է նախատեսվում ուսումնական տարվա մեկ կիսամյակը:

### **Միավորային գնահատման իրագործման ընդունված տեսակները**

Սովորողների ուսումնառության ընթացքում ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

1. Բանավոր հարցում,
2. Գործնական աշխատանք,
3. Թեմատիկ գրավոր աշխատանք,
4. Նախագծային աշխատանք:

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել աշակերտի «գլխում եղածը»:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի՝ գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները: Մեկ կիսամյակում ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախականությունը որոշելու նպատակով ծրագրային նյութը բաժանվում է մասերի, որոնք կոչվում են թեմաներ:

Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:

### **Բանավոր հարցում**

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակաշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանովստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրմանընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը:

Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

*Բանավոր խոսք, Վերարտադրություն, Հաղորդակցություն, Համագործակցություն, Լեզվամտածողություն, Գիտելիքի յուրացում, Տրամաբանություն, Ստեղծագործական մտածողություն, Ուսումնական գործունեություն ցուցաբերելու կարողություններ:*

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

Ակադեմիական գիտելիքի իմացություն, Կիրառելու կարողություն, Ներկայացնելու կարողություն, Ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն, Միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

**Գործնական աշխատանքների** հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

Ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,

Մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,

Նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը, կրթության

շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Սովորողներին ներկայացվող չափորոշիչային և ծրագրային պահանջների

համաձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական

աշխատանքներ, որոնց գնահատման ժամանակ հաշվի են առնվում.

Տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների ու փաստերի ըմբռնման աստիճանը,

Նորովի կամ ստեղծագործական մոտեցումը,

Առաջադրանքների համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողությունը,

Գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

### **Թեմատիկ աշխատանք**

Թեմատիկ գրավոր աշխատանքը միավորային գնահատման մի տեսակ է, որի

իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը

ներկայացնում է գրավոր: Այս աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա

ուսուցանելուց հետո: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել գործնական կամ բանավոր:

Առաջադրանքները կարող են տրվել թեստերով, որոնցում ներառված են ծրագրում առկա տարաբնույթ առաջադրանքներ.

Պատասխանի ընդարձակ շարադրմամբ,

Ճիշտ պատասխանի ընտրությամբ,

Կարճ պատասխան պահանջող, Ապացուցում պահանջող, Գործնական, կիրառական նշանակություն պահանջող, Կառուցվածքի փոփոխություն պահանջող,

Գծապատկերի կազմման պահանջով, Բաց թողածը լրացնելու պահանջով,

Ստեղծագործական մոտեցում պահանջող:

Այս գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային համակարգով:

**Ուսուցման արդյունքների ստուգման գնահատման ընդհանուր սանդղակ**

Բանավոր և գրավոր հարցումների գնահատման չափանիշներ կազմելիս հաշվի են առնվում գնահատման նպատակը, առաջադրանքի տեսակը, բովանդակությունը, դրա կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը և հետևյալ սանդղակը.

1 միավոր («շատ վատ») - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս պատրաստվածություն չի ցուցաբերում,

2 միավոր («վատ») - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է մասնակի պատրաստվածություն և թույլ է տալիս էական սխալներ,

3 միավոր («անբավարար») - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություններ, թերություններ կամ բացթողումներ,

4 միավոր («բավարար») - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,

5 միավոր («միջին») - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ,

6 միավոր («միջինից բարձր») - 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,

7 միավոր («լավ») - 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ,

8 միավոր («շատ լավ») - 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություններ կամ վրիպում,

9 միավոր («գերազանց») - 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, սակայն կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում:

10 միավոր («բացառիկ») - Առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, հմտորեն խուսափում է վրիպումներից, բացթողումներից և անճշտություններից:

### **Ուսուցանող գնահատում**

Ուսուցանող գնահատումը սովորողի կրթական առաջընթացի նպատակով դասավանդման և ուսումնառության ընթացքին գուգակցվող որակական աշխատանքներն են:

Ուսուցանող գնահատման նպատակն է՝ ճշգրտել դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, դասավանդման արդյունավետ մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը, և դրանց օգնությամբ բարելավել ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև աշակերտին ըմբռնելի դարձնել ուսման նպատակները:

Ուսուցանող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները, և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր

սովորողի, խմբի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով:

Գնահատման այս ձևի առանձնահատկություններից է հետադարձ կապի առկայությունը: Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

### **ԹԵՍՏ, ԹԵՍՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Թեստը հանդես է եկել 20-րդ դարի սկզբին և կիրառվել է հոգեբանության ու սոցիոլոգիայի ոլորտներում: Ավելի ուշ ամերիկացի մանկավարժները սկսեցին թեստը կիրառել որպես սովորողների ձեռք բերած գիտելիքների, դրանց ընկալման և կիրառման գնահատման և ստուգման ձև:

Թեստը խնամքով ընտրված հարցերի և առաջադրանքների ամբողջություն է, որը նախատեսված է չափորոշիչների համապատասխան սովորողների գիտելիքների կարողությունների և հմտությունների չափման և արդյունքները մեկ կամ մի քանի հատուկ նպատակներով օգտագործելու համար:

Առաջադրանքն իրենից ներկայացնում է.

կատարել հրահանգ...,

որին հետևում է աշակերտի պատասխանը...,

պատասխանը միավորներով գնահատելու սխեմա – համակարգ:

Յուրաքանչյուր հարց, ենթաառաջադրանք և առաջադրանք հնարավորություն է տալիս թեստի միջոցով տարակարգել աշակերտի կարողությունները:

Թեստի առավելությունները և սահմանափակությունները

Թեստի առավելությունների թույլ և ուժեղ կողմերի մասին խոսվել է բազմիցս, գնահատման և ստուգման այլ միջոցների համեմատ թեստն ունի մի շարք առավելություն.

հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր բաժիններով ստուգել մեծածավալ ուսումնական նյութ. գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ և արագ գնահատել մեծ քանակությամբ սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը, ապահովում է ռեսուրսների և առաջին հերթին ժամանակի

խնայողություն, պարբերական կիրառման ժամանակ, որպես կանոն, սովորողների մոտ ձևավորում է կարգապահություն և ձգտում ծրագրային նյութի յուրացման գործում, նվազեցնում է սուբյեկտիվության աստիճանը, համարվում է ուսուցման գործընթացի անհատական և տարբերակված մոտեցման արդյունավետ եղանակ: Դրական կողմերի հետ մեկտեղ՝ թեստն ունի նաև սահմանափակություն: Այն ընդգրկում է գիտելիքների կարողությունների ու հմտությունների ավելի նեղ շրջանակ, քան նախատեսված է առարկայական չափորոշչով ու ծրագրով: Այդ է պատճառը, որ ամեն թեմա չէ, որի յուրացումը կարելի է ստուգել թեստի միջոցով: Հատկապես երկարաշունչ բացատրություններ պահանջող նյութը չի կարող թեստային հարց կամ առաջադրանք դառնալ: Թեստավորման դժվարություններ են հարուցում նաև ստեղծագործական մտածողության և երևակայության հետ կապված թեմաներն ու երևույթները: Թեստը կարող է ազդել ուսուցման ողջ ընթացքի վրա: Այդպիսի ազդեցությունը կոչվում է թեստի հակադարձ ազդեցություն, որը կարող է լինել դրական կամ բացասական: Թեստի դրական ազդեցությունը պայմանավորված է ստուգվող նյութի ընտրությամբ: Ստուգվող նյութը որքան լավ է ուսուցանվել և սովորողների կողմից ընկալվել ու յուրացվել, այնքան թեստի ազդեցությունը կարող է համարվել դրական: Իսկ եթե վատ է ուսուցանվել, ապա թեստը բացասաբար է անդրադառնում ուսուցման վրա:

Օրինակ՝ եթե աշխարհագրությունից կազմված թեստը սահմանափակվում է այն բանով, որ գերակշռում են փաստերը և ուշադրություն չի դարձվում կարողությունների և հմտությունների ստուգմանը, ապա թեստավորումը կատարվում է միակողմանի և ինքնանպատակ: Այսպիսով՝ թեստը կարող է կիրառել որպես գնահատման արագ արդյունավետ և անաչառ միջոց, որը հարմար է կարճ ժամանակահատվածում շատ սովորողների ստուգելու և գնահատելու համար: Ամերիկացի մանկավարժ Բենջամին Բլումը հավատում էր, որ աշակերտներին կարելի է սովորեցնել մտածել ավելի բարձր իմացական մակարդակներում: Բլումի մոդելին հետևող ուսուցիչներն ընտրում են այնպիսի խնդիրներ, որոնք առաջ են շարժվում, մտածողական գործընթացում պարզից դեպի բարդը գնալու աստիճանակարգով (մտապահում-ըմբռնում-կիրառում-վերլուծություն-համադրում-գնահատում):

**«Աշխարհագրություն» առարկայի դասավանդման և գնահատման սկզբունքները ըստ  
Բլումի դասակարգման**

Իմացության բաղադրիչներ	Սովորողը գիտի (նպատակ)	Կարողանում է (գործողություններ)	Ուսուցիչը կազմում է առաջադրանքներ հետևյալ պահանջներով
<b>Գիտելիք</b>	Աշխարհագրական անուններ Կոնկրետ փաստեր ընդհանուր հասկացություններ հիմնարար հասկացություններ մեթոդներ • սկզբունքներ	Թվարկել, սահմանել, նկարագրել, անվանել, պարզել, վերարտադրել, ընտրել, ուրվագծել, համապատասխանեցնել, պնդել	պատմել, թվարկել, նկարագրել, տեղադրել, գրել, լրացնել, քարտեզագրել, ընտրել
<b>Ընկալում</b>	Հասկանում և մեկնաբանում է փաստերը և սկզբունքները, տեքստը, քարտեզները, աղյուսակները, սխեմաները, գրաֆիկները, դիագրամները Գնահատում է հնարավոր հետևանքները Հիմնավորում է մեթոդներ և սկզբունքներ Նոր գիտելիքը կապում է նախորդի հետ, հարաբերակցում	Պաշտպանել իր տեսակետը, համեմատել, տարբերակել, բացատրել, օրինակներ բերել, մանրամասնել, հետևություններ ուեզրակացություններ անել, վերաձևակերպել, կանխատեսել, ամփոփել	բացատրել, մեկնաբանել, վերաշարադրել, նկարագրել, տարբերակել հասկացությունները, գտնել նմանությունները և տարբերությունները, քննարկել
<b>Կիրառում</b>	Իմացածը (հասկացություններ, սկզբունքներ...), կիրառում է ծանոթ և անծանոթ (նոր) իրավիճակներում Գործնականում կիրառում է օրենքները, օրինաչափությունները, կազմում է քարտեզներ, աղյուսակներ, գրաֆիկներ, լուծում է մաթեմատիկական խնդիրներ	Փոփոխել, ձևափոխել, բացահայտել, կանխատեսել, պատրաստել, օգտագործել, չափել, դիտարկել, որոշումներ կայացնել, ուսումնասիրել, խնդիրներ լուծել, սովորել, կողմնորոշվել, հարցադրումներ կատարել	Կիրառել, լուծել, ցույց տալ, ձևավորել, կազմել, ամբողջացնել, համեմատել, խմբավորել, դասակարգել, շարունակել, ավարտել, գծել քարտեզագրել, կառուցել, գրանցել, հաշվել
<b>Վերլուծում</b>	Տարբերակում է փաստն ու կարծիքը, գտնում է անհիմն ենթադրությունները	Բաժանում է, տարրալուծում, պատկերում,	Երևույթների և օբյեկտների միջև եղած կապերի ու



	<p>Գտնում է դատողությունների մեջ թույլ տրված տրամաբանական սխալները Մասերի է բաժանում ուսումնական նյութը, ցույց տալիս դրա կառուցվածքը Գիտի խնդիրը (հիմնահարցը), գտնում է խնդիրների լուծման առավել ռացիոնալ ուղիներ</p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծում է գրա- ֆիկները, գնահատում է փաստի անհամապատասխանությունը</li> </ul>	<p>տարբերակում, ցուցադրում, բխեցնում, առանձնացնում, Մխալների պարզում, ուղղում, նկարագրում, հիմնահարցերին առնչվող դատողությունների հայտնաբերում, հիմնավորում, ապացուցում, պնդում, արդյունքների վերլուծում, հիմնահարցերի հետազոտում</p>	<p>փոխազդեցությունների բացահայտում, փաստերի, տվյալների գնահատում, հետևանքների կանխատեսում, հիմնավորում</p>
<b>Համադրում</b>	<p>պատճառահետևանքային կապերի մեջ, համակարգված բանավոր և գրավոր խոսք, գործողությունների մշակված պլան դասակարգման նոր սխեմաների առաջադրում քարտեզների, սխեմաների դիագրամների համադրում և մեկնաբանում</p>	<p>Համադրում է, նորովի շարադրում, ստեղծում, պատմում, բացատրում, ապացուցում, պլանավորում, ամփոփում, վերակառուցում</p>	<p>համեմատել, հայտնաբերել, ապացուցել, ստեղծել, շարադրել, կանխատեսել, նախագծել, պլանավորել, պատկերացնել, ձևակերպել, բարելավել, առաջարկել, հորինել</p>
<b>Արժևորում</b>	<p>Դատողություններ է անում նյութի հիմնավորվածության մասին</p> <p>Դատողություններ է անում, թե որքանով են եզրակացությունները բխում հիմքերից</p> <p>Առաջնորդվում է ինչպես սեփական, այնպես էլ համընդհանուր չափանիշներով</p> <p>Դատողություններ անում բնության և հասարակության ներդաշնակության մասին</p>	<p>Համեմատում է, դասակարգում, ընդհանրացնում, եզրակացնում, հակադրում, քննադատում, նկարագրում, բացատրում, հիմնավորում, մեկնաբանում, ամփոփում, գնահատական տալիս</p>	<p>տրամաբանել, հիմնավորել, դասակարգել, բանավիճել, փաստարկել, քննարկել, ճշգրտել, գնահատել</p>

Ընկալումը գնահատելու համար

1- ին կողմ – Աշակերտն, ով, իրոք, ըմբռնում է, կարող է քաջատրել

2-րդ կողմ – Աշակերտն, ով, իրոք, ըմբռնում է, կարող է մեկնաբանել

3-րդ կողմ – Աշակերտն, ով, իրոք, ըմբռնում է, կարող է կիրառել

4-րդ կողմ – Աշակերտն, ով, իրոք, ըմբռնում է, կարող է հիմնավորել իր տեսակետը

5-րդ կողմ – Աշակերտն, ով, իրոք, ըմբռնում է, կարող է կատարել ինքնագնահատում

### **ԹԵՍԻ ՆՊԱՏԱԿԸ**

Թեստը մշակելու ց առաջ պետք է պատասխան տալ մի շարք հարցերի կառուցված հերթին այն հարցին, թե ինչ նպատակի համար է այն նախատեսվում: Ըստ նպատակի թեստերը կարող են լինել.

1. Գիտելիքի ստուգման ընդհանրական թեստեր, որոնք տրվում են հանրակրթական հաստատությունների շրջանավարտներին ավարտական վկայական տալու, բուհերի կա միջնագոտությունների համար ընտրություններ կատարելու նպատակով: Այս տեսակի թեստը կազմվում է կրթական հաստատություններից դուրս:

2. Սովորողների առաջադիմության ստուգման թեստերը, որոնք տրվում են կիսամյակի, ուսումնական տարվա կամ յուրաքանչյուր թեմայի ուսուցման վերջում՝ ստուգում են նյութի յուրացման մակարդակը և աստիճանը: Այս թեստերը կարող են լինել ուսուցանող (ձևավորող) թեստեր:

3. Հայտորոշիչ թեստեր, որոնք պարբերաբար տրվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը քաջահայտելու հետագայում ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով:

4. Տեղակայման (սովորողի ուսումնառության տեղը որոշող) թեստեր, որոնք տրվում են դասընթացի սկզբում՝ սովորողներին տեղակայելու՝ ըստ նրանց գիտելիքի և կարողությունների ունեցած պաշարի:

5. Արժևորման նպատակով տրվող թեստերը, որոնց միջոցով գնահատվում են ուսումնական ծրագրի արդյունավետությունը:

6. Տարբեր մասնավոր նպատակների ծառայող թեստեր, որոնք տրվում են քաջահայտելու գնահատվող նյութի բովանդակության կամ ճանաչողական վարքագծի որևէ բաղադրիչ:

### **Թեստ կազմելու հիմնական սկզբունքները**

Թեստը կազմելու համար պետք է իմանալ հետևյալ սկզբունքները.

Թեստը պետք է լինի հուսալի կամ արժանահավատ; Հուսալի նշանակում է ստուգման և գնահատման համապատասխանություն; Թեստը համարվում է հուսալի, եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերին նույն խմբին սուզելու դեպքում, կամ միառժամանակ երկու համարժեք թեստերի տրամադրման դեպքում ստացվում են գրեթե նույն արդյունքները; Այսպիսով թեստի հուսալիության հետ կապված քննարկման են ենթակա երկու հիմնական մեթոդաբանական խնդիրները՝ ժամանակը և բովանդակությունը; Հուսալիությունն սուզման արդյունքում գրանցված միավորի հարաբերական կայունությունն է;

Հանրագումարային ձեռքբերումների և քննական թեստերի հուսալիությունը որոշելիս չպետք է սահմանափակվե լսուկ պարզ չափումների հուսալիության որոշմամբ:

Քանի որ այդ թեստերի արդյունքներն օգտագործվելու են հետագա նպատակների և այլ միջավայրերի համար, ապա հստակ է պարզել նաև թեստի նպատակ

հանդիսացող հայտանշի հուսալիության աստիճանը; Յուրաքանչյուր թեստին կից պետք է մշակվեն գնահատման չափանիշներ: Այստեղ բացահայտ ներկայացվում են ստուգման կամ ուսումնասիրման համար անհրաժեշտ որակներն ու հարակից պահանջները, որոնք պետք է դրսևորվի առաջանդրանքները կատարող աշակերտը;

Կատարված աշխատանքի արդյունքներ նստուգվում են գնահատման կամ

հետազոտման և ուսուցման նպատակով; Թեստի արդյունքներն ավելի հուսալի են, եթե այն նախատեսվում է ավելի քիչ ուսումնական որակներ կամ ձեռքբերումներ սուզելու համար: Լավագույն թեստը միայն մեկ նպատակի համար նախատեսվել է:

Թեստը պետք է լինի հավաստի, այսինքն, ստուգի այն գիտելիքները,

կարողություններն ու հմտությունը, որը նախատեսված է:

Հավաստիությունն այն ցուցիչն է, որով փաստերի ու տեսության միջոցով կարելի է

մեկնաբանել թեստի գնահատականները նախատեսված նպատակով այն

օգտագործելու տեսանկյունից: Թեստի հավաստիությունը նպատակին ծառայելն է:

Թեստի արժևորման և կատարելագործման համար առավել հիմնարար բնութագրիչ է

հավաստիությունը, քանի որ այն իր նշանակությամբ բացարձակ որակ է, որով

արժևորվում և որակապես բարելավվում է թեստը:

Ուսումնական տարբեր նյութեր կարող են ծառայել չափորոշային մի որոշակի պահանջի:

Օրինակ՝ ենթադրենք որևէ ուսումնական առարկայի տարբեր թեմաների ուսումնասիրությունը պահանջում է տրամաբանական մտածողության զարգացում: Եթե ստուգման նպատակն է պարզել սովորողների շրջանում այդ բաղադրիչի որակը, ապա կազմված է համապատասխան թեստ՝ բաղկացած որոշակի առաջադրաքննից: Այդ թեստի չափորոշիչային հավաստիությունը որոշելու նպատակով, որպես օրինակ, կարելի է կազմել լադյուսակ, որը մի ուղղությամբ նշում է չափորոշային պահանջին համապատասխանությունը, իսկ մյուս ուղղությամբ՝ թեստի առաջադրանքը:

Ուսուցիչը որոշում է, թե յուրաքանչյուր առաջադրանք որքանով է համապատասխանում չափորոշային նպահանջներին: Ունենալով թեստի նպատակը՝ հասկնորոշիչը և լրացրած աղյուսակը ուսուցիչը կարող է արժեքավոր դատողություններ անել տվյալ թեստի չափորոշային հավաստիության վերաբերյալ: Թեստի չափորոշիչային հավաստիությունը պայմանավորված է, թե որքանով են չափորոշիչային պահանջներն արտահայտված գնահատման մեջ՝ առաջադրանքների միջոցով:

Թեստը պետք է լինի իրագործելի թե՛ մարդկային ռեսուրսների, թե՛ ֆինանսական, թե՛ տեխնիկական, և թե՛ ժամանակի առումներով:

Թեստը պետք է լինի արդյունավետ: Արդյունավետ թեստ նշանակում է՝ նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով ապահովել առավելագույն արդյունք:

Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը՝ ամփոփ ներկայացված որպես ծրագրային պարտադիր միջուկ: Թեստի արդյունավետությունը կարելի է որոշել նաև՝ համադրելով թեստի դժվարության աստիճանը թեստավորվողի պատրաստվածության մակարդակի հետ: Թեստն արդյունավետ է, եթե բարդության աստիճանը համապատասխանում է թեստավորվողի պատրաստվածության մակարդակին: Համապատասխանել նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը պետք է ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար լինի: Այն պետք է լինի միջին բարդության:

Թեստում ընդգրկված յուրաքանչյուր առաջադրանք պետք է օգնի չափման գործընթացին՝ տարբերակելով սովորողների ունակությունները: Թեստը կիրառելուց առաջ օգտակար կլինի դրա գնումը հոգեբանական տեսանկյունից՝ հաշվի առնելով սովորողի տարիքային առանձնահատկությունները:

Թեստաբանության պարտադիր պահանջների մեջ են մտնում.

թեստի արդյունքների գրացման կարգը, թեստի արդյունքների և դրանում ընդգրկված առաջադրանքների վերլուծությունը, թեստի միավորների մեկնաբանությունները, ուսուցանող նպատակով տրված թեստի արդյունքների վերլուծությունը և մեկնաբանությունները, եզրակացությունները: Գնահատման գործընթացը ծառայում է դրված նպատակին, եթե այն համապատասխանում է հետևյալ գլխավոր բնութագրիչներին. *հուսալի է, հավաստի է, արդյունավետ է:*

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով և հետազոտելով ուսուցման մեջ գնահատման նոր համակարգի ներդրման մասին բազմաթիվ և բազմազան նյութեր, ելնելով սեփական փորձից՝ ես եկա հետևյալ եզրահանգան.

Ընթացիկ գնահատումը՝ իր բոլոր տեսակներով հանդերձ, բավականին բարդ և կարևոր գործընթաց է ուսումնական գործընթացում: Գնահատման կարևորումն ընդգծելու համար հետազոտության ընթացքում առանձնացրել եմ հետևյալ դրույթները.

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը:

Գնահատումը ուսումնական գործընթացում նշանակում է նաև քանակական և որակական տվյալների նպատակային հավաքում:

Ուսուցիչների համար գնահատման նպատակը սովորաբար աշակերտների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է:

Ընթացիկ գնահատման համակարգ ասելով հասկանում ենք ուսումնառության ընթացքում ուսուցչի կողմից աշակերտների ձեռքբերումների մասին

կանոնակարգված քանակական և որակական տվյալների հավաքագրում, գրանցում,

ամփոփում, հետադարձ կապ, վերլուծության հաշվետվություն և գնահատման աշխատանքների կառավարում:

Մուլթեկտիվ գնահատումը պետք է արվի հնարավորինս արդարացի, քանի որ դրա արդյունքները երբեմն օգտագործում է երրորդ կողմը՝ գնահատված անձանց ապագայի վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Ընթացիկ գնահատումները տրոհվում են երկու գլխավոր ձևերի՝ միավորային և ուսուցանող:

Միավորային գնահատումն ունի մրցակցային բնույթ, և դրանով իսկ նրա դերը դառնում է չափազանց կարևոր: Աշակերտին միավորով գնահատելը պիտի լինի ճիշտ և արդարացի: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի վերահսկումը:

Ընթացիկ գնահատման համակարգի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները: Ընթացիկ գնահատման ձևերի ու տեսակների ամբողջական կիրառման համար որպես ժամանակային-հաշվարկային միավոր է նախատեսվում ուսումնական տարվա մեկ կիսամյակը:

Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Միքայելյան Օ. Ս., Միքայելյան Ս. Օ., «Ընթացիկ գնահատման նոր համակարգը՝ որպես կրթության որակի բարելավման խթան»: Երևան, 2010թ.

ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Երևան, 2013թ.

Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ «Աշխարհագրություն» Ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, Երևան, 2009թ.